ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հուլիսի 2024թ. թիվ 400-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 341-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1550-Լ որոշման թիվ 5 հավելվածով հաստատված՝ ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի կանոնադրությունը և հաշվի առնելով ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչության պետի 2024 թվականի մայիսի 23-ի թիվ 95/13-601 գրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2018 թվականի նոյեմբերի 14-ի «ՀՀ Լոռու մարզի քաղաքացիական պաշտպանության ծառայություններ ստեղծելու, դրանց կանոնադրությունները և տարեկան աշխատանքային պլանի օրինակելի ձևը հաստատելու և ՀՀ Լոռու մարզպետի 2018 թվականի սեպտեմբերի 6-ի թիվ 237-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 341-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1. Ռազմական դրության ժամանակ և խաղաղ պայմաններում Լոռու մարզի բնակչության և քաղաքացիական պաշտպանությանն ուղղված աշխատանքների պլանավորման և կազմակերպման, խոցման օջախներում փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման համար Լոռու մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների, Լոռու մարզի համայնքների համայնքապետարանների, Լոռու մարզի կազմակերպությունների (համաձայնությամբ) ստորաբաժանումների հիման վրա ստեղծել Լոռու մարզի քաղաքացիական պաշտպանության հետևյալ ծառայությունները՝

1) տրանսպորտային և կապի միասնական ծառայություն՝ ծառայության պետ նշանակել Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետին (ծածկագիր՝ 95-30.1-Մ2-3),

2) ինժեներական և կոմունալ-տեխնիկական միասնական ծառայություն՝ ծառայության պետ նշանակել Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետին (ծածկագիր՝ 95-30.1-Մ2-1),

3) բժշկական ծառայություն՝ ծառայության պետ նշանակել Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետին,

4) առևտրի և սննդի ծառայություն՝ ծառայության պետ նշանակել Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետին,

5) էներգետիկայի ծառայություն՝ ծառայության պետ նշանակել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Դեբեդ» մասնաճյուղի տնօրենին,

6) բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայություն՝ ծառայության պետ նշանակել Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետին,

7) հասարակական կարգի պահպանման ծառայություն՝ ծառայության պետ նշանակել ՀՀ ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ ՆԳՆ) Ոստիկանության Լոռու մարզային վարչության պետին,

8) նյութատեխնիկական մատակարարման ծառայություն՝ ծառայության պետ նշանակել Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետին,

9) գազամատակարարման ծառայություն՝ ծառայության պետ նշանակել «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության Լոռու գազամատակարարման և գազաֆիկացման մասնաճյուղի տնօրենին,

10) բնակչության հատուկ սպասարկումների ծառայություն՝ ծառայության պետ նշանակել Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետին (ծածկագիր 95-30.2-Մ2-3):»

2. Որոշման 3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում «ԱԻՆ» բառերը փոխարինել «ՆԳՆ» բառերով:

3. Որոշման թիվ 1 հավելվածի 1-ին և 7-րդ կետերում «մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի» բառերը փոխարինել «մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության» բառերով:

4. Որոշման թիվ 2 հավելվածի՝

1) 1-ին կետում «մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի» բառերը փոխարինել «մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության» բառերով:

2) 7-րդ կետում «մարզպետարանի» բառը փոխարինել «մարզպետի աշխատակազմի» բառերով:

5. Որոշման թիվ 3 հավելվածի 1-ին և 7-րդ կետերում «մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության» բառերը փոխարինել «մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության» բառերով:

6. Որոշման թիվ 4 հավելվածի 1-ին և 7-րդ կետերում «մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի» բառերը փոխարինել «մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի» բառերով:

7. Որոշման թիվ 6 հավելվածի 1-ին և 7-րդ կետերում «մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության» բառերը փոխարինել

«մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության» բառերով:

8. Որոշման թիվ 7 հավելվածի 1-ին և 7-րդ կետերում «ոստիկանության» բառից առաջ ավելացնել «ՆԳՆ» բառը:

9. Որոշման թիվ 8 հավելվածի 1-ին և 7-րդ կետերում «մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության» բառերը փոխարինել «մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության» բառերով:

10. Որոշման թիվ 9 հավելվածի՝

1) 1-ին կետում «մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի» բառերը փոխարինել «մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության» բառերով:

2) 7-րդ կետում «մարզպետարանի» բառը փոխարինել «մարզպետի աշխատակազմի» բառերով:

11. Որոշման թիվ 11 հավելվածում հանել «Ա.Ղուկասյան» և «փ/ծ գնդապետ Կ.Հովհաննիսյան» բառերը, իսկ «ԱԻՆ» բառը բոլոր տեղերում փոխարինել «ՆԳՆ» բառով:

12. Որոշման 1-ից 10-րդ հավելվածների 16-րդ կետում «արտակարգ իրավիճակների նախարարության» բառակապակցությունը փոխարինել «ներքին գործերի նախարարության» բառակապակցությամբ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

11/07/2024

X

ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ

Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. հուլիսի 10
ք.Վանաձոր